26.260

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1930

Հ. ԱՏՅԱՐՄԻՈՒԹՅՈՒՆ ԴԱՇՏԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Гос. Публ. Библиотека
им. А. Мясникяна
16013-57

17 MAY 2013

26.260

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտ. 5868 (բ). Պատվեր № 179. Տիրաժ 5.000.

334.6

4-21

Ար

15 JAN 2010

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ........................ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

........................................ շրջանի,

........................................ գյուղի

բատրակները, չքավորներն ու միջակներն ինքնակամ համախմբված են արտադրական ընկերությունում, փորձելի միացյալ ուժերով ու միջոցներով բարելավեն և ընդարձակեն իրենց տնտեսությունը, բարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը, կազմակերպեն մթերքների նախ-

նական վերամշակումը և վաճառահանումը, ձըգ-
տելով բարձրացնել գյուղատնտեսությունը և բա-
րելավել իրենց նյութական դրությունը, փոխ մի-
ջոցով և պայքարել կուլակների շահագործման
և մանր անհատական տնտեսությունների կարի-
քի, աղքատության ու հետամնացության դեմ:

Ընկերության նպատակն է՝ ընդարձակել գյու-
ղատնտեսության բոլոր ճյուղերը, առանձնապես
մեծ ուշադրություն դարձնելով զարգացնելու .
. . . . . . . . . . . . . . . . . . իրեն հիմնական
ճյուղ տվյալ շրջանի համար:

2. Այդ նպատակներին հասնելու համար ըն-
կերությունը՝

ա) Միջոցներ է ձեռք առնում ընդարձակելու
իր անդամների ցանքերի տարածությունը, պա-
րարտացնելու վարելահողերն ու արոտատեղինե-
րը, ձեռք է բերում գյուղատնտեսական բարդ մե-
քենաներ, տրակտորներ, տեսակավոր սերմեր,
կնքում է արտադրական պայմանագրեր մեքենա-
մեքենա-տրակտորային կայանի հետ և ան-
դամների տնտեսություններում անց է կացնում
ագրոմինիմում:

բ) Կազմակերպում է արտադրական ձեռնար-
կումներ՝ անասունների և թռչունների աճեց-



ման ու զարգացման համար, ձեռք է բերում ցե-
ղական ցուլեր, կազմակերպում է ցեղաբուծա-
րաններ, բեղմնակայաններ, թռչնակայաններ, ին-
կուբատորներ, կերի սիլոսացում ու անասնաբու-
ժական և ագրոզոոտեխնիկական օգնություն:

գ) Մատակարարում է իր անդամներին գյու-
ղատնտեսական մեքենաներ, գործիքներ, հանքա-
յին պարարտանյութեր, վնասատուների դեմ պայ-
քարելու միջոցներ և գյուղատնտեսության հա-
մար անհրաժեշտ արտադրական միջոցներ ու պի-
տույքներ:

դ) Ընդարձակում է տեխնիկական կուլտու-
րաների մշակումը, պտղաբուծությունը և բան-
ջարաբուծությունը:

ե) Ստանում է արտադրական նպատակների
համար վարկեր և սուբսիդիաները օգտագործում է
համայնական ձեռնարկումներ կազմակերպելու և
իր անդամների գյուղատնտեսական արտադրու-
թյունը բարձրացնելու համար:

զ) Կազմակերպում է իր անդամների գյու-
ղատնտեսական մթերքների վաճառահանումը՝
պետական, հասարակական և կոոպերատիվ ձեռ-
նարկությունների հետ կնքված կոնտրակտացիոն
պայմանագրերի հիման վրա:

ը) Ինքնուրույն կերպով, կամ ուրիշ կոլտնտեսության, կոոպերատիվ կազմակերպությունների հետ միասին կազմակերպում է ձեռնարկություններ գյուղատնտեսական մթերքների նախնական վերամշակման համար, գյուղատնտեսական ինվենտարի և մեքենաների վերանորոգման արհեստանոցներ, սերմմաքրիչ կայաններ և այլն:

թ) Կազմակերպում է համայնքային սկզբունքներով տնտեսական ձեռնարկումներ և ուրիշ կառուցումներ:

ժ) Հիմնում է հատուկ համայնական սերմի և կերի պահեստի ֆոնդեր, անբերրիության և սակավ կեր լինելու դեմ պայքարելու համար:

ժա) Կազմակերպում է անդամների աշխատանքի փոխադարձ օգնության գործը, առանձնապես օգնելով չքավորներին ու բատրակներին:

ժբ) Բարելավում է իր անդամների և առանձնապես կանանց ու երեխաների կյանքի և կենցաղային պայմանները:

Ընկերությունը իր ձեռնարկումները կիրառում է ամեն կերպ ձգտելով բարձրացնել անդամների հասարակական ինքնագործունեությունը, —կազմակերպելով արտադրական խորհրդակցություններ՝ աշխատանքի վերաբերյալ կարևորա-



կան հարցերը քննելու համար, անցկացնելով սոցիալիստական մրցում ինչպես ընկերության անդամների, նույնպես և ուրիշ ընկերությունների, կոլտնտեսությունների և այլ կազմակերպությունների միջև:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Ընկերության անդամ ընդունվում է վարչությունը, որը ընդունված անդամների ցուցակը դնում է առաջիկա ընդհանուր ժողովին ի հաստատություն: Ընկերության անդամ կարող են լինել 16 տար. հասած բոլոր աշխատավորները: Ընկերության անդամներ չեն կարող լինել կուլակները և ընտրական իրավունքից զրկված անձինք: Վերահիշյալ կանոնի փոփոխությունը թույլատրվում է այն ընտանիքների անդամների նկատմամբ, որոնց կան Խորհրդային իշխանության գործին նվիրված կարմիր պարտիզաններ, կարմիր բանակայիններ, կարմիր նավաստիներ (շարքային և հրամկազմ), գյուղական ուսուցիչներ, եթե նրանք երաշխավորում են իրենց ընտանիքի անդամների համար:

4. Ընկերության բոլոր անդամները պարտա-

վոր են յենթարկվել կանոնադրության պահանջներին, ընկերության անդամների ընդհանուր ժողովների և վարչության վորոշումներին, կանոնավոր կերպով կատարել կոնտրակտացիոն պարտականությունները և տնտեսությունը վարելու մասին ընկերության կողմից սահմանված կանոնները:

Ընկերության կողմից ընդունված պարտավորություններից խուսափելու, կանոնադրության կետերը և վարչության վորոշումները խախտելու, դեպի կոոպերատիվ գույքը անտնտեսավար վերաբերմունք ցուցաբերելու համար հանցավորները յենթարկվում են պատասխանատվության ընդհանուր ժողովների կողմից սահմանված կարգով,— մինչև ընկերության անդամությունից հեռացնելը, ծածկելով ընկերության հասցրած վընասը:

Ընկերության անդամությունից դուրս յեկած և հեռացված անդամների հետ հաշվարկ կատարվում է հաշվետու տարվա վերջից վոչ շուտ, բատ վորում վերադարձվում է փայավճարները, ընկերությունից հասանելիք գումարները, դուրս գալով անդամի պարտքը և նրան հասանելիք մնացի մասը:



## 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5. Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է մուծել մուտքի և փայավճար: Բատրակները մուծում են.... ռուբ. մուտքի և ..... ռուբ. փայավճար, չքավորները, վորոնք ազատված են գյուղատնտեսական հարկից ..... ռուբ. մուտքի և ..... ռուբլի փայավճար, իսկ ընդհանուր կարգով հարկ վճարողները ..... ռուբլի մուտքի և ..... ռուբլի փայավճար:

Բատրակների և չքավորների փայավճարները գանձելու համար ընկերությունը սահմանում է ժամկետներ:

Միևնույն տնտեսությունից յերկրորդ անդամը ընկերության անդամ ընդունվելիս մուծում է միայն մուտքի վճարը, ազատվելով փայավճարի մուծումից:

Այն անձինք, վորոնց յեկամուտի աղբյուրն է միայն աշխատավարձը, փայավճար մուծում են 10 ռուբ. մինչև 25 ռուբ. սահմաններում, մաս-մաս մուծելու իրավունքով, իսկ մուտքի վճար մեկ ռուբ. մինչև 3 ռուբ.:

6. Արտադրական ձեռնարկությունների կահավորման և ուրիշ տնտեսական խոշոր ձեռնար-

կումների ու շինարարության համար (փաձակայաններ, օրինակելի գոմեր) ընդհանուր ժողովը կարող է սահմանել լրացուցիչ վերադարձնելի և անվերադարձ հատուկ վճարներ, կամ կազմակերպել այդ նպատակների համար անդամների համայնական աշխատանք:

7. Ագրոտեխնիկական աշխատանքների, ինդուստրացման և այլ հատուկ կարիքների համար նախատեսված հատուկ անդամավճարների դրամարկղին արվող տարեկան մուծումների չափը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից, նույնպես յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության ունակության, որպեսին որոշվում է գյուղմխահարկը գանձելու համար որոշված յեկամուտի չափով:

## 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8. Ընկերության գործերը կառավարում է անդամների ընդհանուր ժողովը և վարչությունը: Յեթե անդամների շատության պատճառով ընդհանուր ժողով հրավիրելը դժվարանում է, այն դեպքում ընդհանուր ժողովը փոխարինվում է լիազորական ժողովներով:

9. Ընդհանուր կամ լիազորների ժողովը



համարվում է ընկերության բարձրագույն մարմինը: Նա ընտրում է ընկերության վարչություն և վերստուգիչ հանձնաժողով, հաստատում է նրանց մասին հրահանգներ, վերանայում ու հաստատում է օգուտի և վնասի նախահաշիվը, նաև ընկերության աշխատանքի ծրագիրը, կոնտրակտացիայի ու սոցմրցման պայմանագրերը և վճռում է դանազան կարեվոր հարցեր, որոնք վերաբերում են ընկերության աշխատանքներին:

Ընդհանուր կամ լիազորական ժողովը օրինական է համարվում անդամների կես մասից ոչ պակաս ներկա լինելու դեպքում: Նրանց որոշումը ընդունվում է ձայների պարզ մեծամասնությամբ:

10. Վարչությունը ընտրվում է ընդհանուր կամ լիազորական ժողովում մեկ տարի ժամանակով, ոչ պակաս 3 անդամից և 2 փոխանդամից: Վարչությունը համարվում է ընկերության գործադիր մարմինը և հաշվետու է իր գործունեության համար ընդհանուր կամ լիազորական ժողովի առաջ ոչ պակաս տարեկան յերկու անգամից:

11. Վարչությունը պարտավոր է տանել ընկերության հաշվետվությունը շրջկոոպմիության կողմից սահմանված ձևերով:

12. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է վարչության գործունեությունը, կատարում է արտադրական պլանների, նախահաշիվների, պայմանագրերի և պարտավորությունների հետազոտում, քննության է յենթարկում դրամարկղը, ընկերության փաստաթղթերն ու հաշվետվությունները և տալիս է իր յեզրակացությունն ընդհանուր կամ լիազորական ժողովին ամեն մի կատարած վերստուգման համար: Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է մեկ տարի ժամանակով 3 անդամից և 2 փոխանդամից բաղկացած:

## 5. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՈՊՍԻՍՏԵՄԻ ՀԵՏ

Ընկերությունը համարվում է անդամ ........ շրջմիության և իր աշխատանքները տանում է նրա անմիջական ղեկավարությամբ՝ իր արտադրական պլանի հիման վրա: Ընկերությունը շրջմիության հետ կնքում է կոնտրակտացիոն պայմանագիր, վորով պարտավորություն է ստանձնում ընկերության և նրա անդամների համար գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելու և ապրանքային ամբողջ արտադրանքը պլանային կարգով պետությանը կամ կոոպերացիային հանձնելու, ինչպես և պարտավորություն է ստանձնում շրջմիության և այլ պետական ու կոոպերատիվ կազմակերպությունների համար ընկերության և նրա անդամներին արտադրական միջոցներ և սպառողական ապրանքներ տալու, նույնպես և ընկերության ու նրա անդամների վարկավորման և ագրոտեխնիկական սպասարկման կազմակերպելու համար:



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԽՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0193294

6